11 ապրիլի 2019 թվականի N 439 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 955-Ն, 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1699-Ն ԵՎ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 113-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-Ն որոշման՝

1) N 1 հավելվածում՝

ա. 3-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-րդ, 19-րդ և 20-րդ ենթակետերով.

«18) հետիոտնային և հեծանվային արահետ (հեծանվահետիոտնային արահետ)՝ երթևեկելի մասից կառուցվածքով առանձնացված ճանապարհի տարր (կամ առանձին

ճանապարհի)՝ նախատեսված հետիոտներից առանձին կամ նրանց հետ համատեղ հեծանվորդների երթևեկության համար և նշված 4.5.2-4.5.7 նշաններով.

19) հեծանվորդների համար գոտի՝ երթևեկելի մասի մյուս հատվածից հորիզոնական գծանշումով առանձնացված և 5.14.2 նշանով նշված երթևեկելի մասի գոտի՝ նախատեսված հեծանիվներով և մոպեդներով երթևեկելու համար.

20) հիբրիդային ավտոմոբիլ՝ էներգիայի 2-ից ոչ պակաս տարբեր փոխակերպիչներ (շարժիչներ) ունեցող և տրանսպորտային միջոցը շարժման մեջ դնելու նպատակների համար էներգիայի կուտակման 2 տարբեր համակարգեր ունեցող տրանսպորտային միջոց:»,

բ. 70-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«70. Բնակավայրերում և բնակավայրերից դուրս ճանապարհների առանձին հատվածներում, 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի կիրառմամբ, կարող է սահմանվել սույն կանոնների 68-70-րդ կետերով սահմանված առավելագույն արագությունից ինչպես ցածր, այնպես էլ բարձր արագություն: 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում» նշանի կիրառմամբ սույն կանոնների 68-70-րդ կետերով սահմանված առավելագույն արագությունից բարձր արագություն սահմանելու դեպքում այն չի կարող գերազանցել բնակավայրում 80 կմ/ժ-ը, իսկ բնակավայրից դուրս՝ 110 կմ/ժ-ը:»,

գ. 84-րդ կետի 4-րդ ենթակետում «երթևեկելի մասի հետ հետիոտնային անցումների շփման եզրերից (դեպի երթևեկելի մասեր) 5 մ պակաս վայրում» բառերը փոխարինել «շարժման ուղղությամբ հետիոտնային անցումից առաջ՝ 5 մ մոտ վայրում» բառերով,

դ. 84-րդ կետի 7-րդ ենթակետում «կետերից» բառը փոխարինել «կետի տարածքում» բառերով,

ե. «X. ԽԱՉՄԵՐՈՒԿՆԵՐԻ ԱՆՑՈՒՄԸ» գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ 86.1-ին կետով.

«86.1. Խաչմերուկին մոտենալիս վարորդը պետք է առանձնահատուկ ուշադրություն ցուցաբերի՝ ելնելով տեղի պայմաններից: Մասնավորապես, վարորդը տրանսպորտային միջոցը պետք է վարի այնպիսի արագությամբ, որ հնարավորություն ունենա կանգնելու և բաց թողնելու անցման առաջնահերթության իրավունք ունեցող փոխադրամիջոցները:»,

զ. 88-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«88. Արգելվում է մուտք գործել 1.26 գծանշմամբ նշված խաչմերուկ, երթևեկելի մասերի կամ խաչմերուկի հատվածների հատում, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն Կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի:»,

է. 93-րդ կետում «պետք է այն ազատի» բառերը փոխարինել «կարող է այն ազատել» բառերով և «նախընտրած ուղղությամբ» բառերից հետո լրացնել «, սակայն պայմանով, որ դա չի խանգարի երթևեկության մյուս մասնակիցների շարժմանն այն ուղղությամբ, որով երթևեկությունը բաց է» բառերով,

ը. 96-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Այդպիսի խաչմերուկներում տրամվայը, անկախ երթևեկության ուղղությունից, առավելություն ունի հավասարազոր ճանապարհով համընթաց կամ հանդիպակաց ուղղությամբ երթևեկող ոչ ռելսագնաց տրանսպորտային միջոցների նկատմամբ:»,

թ. 98-րդ կետի 1-ին նախադասությունը «Հավասարազոր ճանապարհների խաչմերուկում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ Կանոնների 98.1-ին կետով նախատեսված դեպքերի» բառերով,

ժ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 98.1-ին կետով.

«98.1. 4.3՝ «Շրջանաձև երթևեկություն» նշանով կահավորված շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկ մուտք գործելիս տրանսպորտային միջոցի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել այդպիսի խաչմերուկում երթևեկող տրանսպորտային միջոցներին:»,

ժա. 124-րդ կետում «5.11» թիվը փոխարինել «5.11.1» թվով,

ժբ. 155-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«155. Երեխաների խմբերի կազմակերպված փոխադրումը պետք է իրականացվի սույն Կանոններին, ինչպես նաև այդպիսի փոխադրումների կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված կանոններին համապատասխան՝ «Երեխաների փոխադրում» ճանաչման նշաններով կահավորված ավտոբուսով:»,

ժգ. 159-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«159. Մինչև 7 տարեկան երեխաների փոխադրումը թեթև մարդատար ավտոմոբիլում և բեռնատար ավտոմոբիլի խցիկում, որոնց կառուցվածքով նախատեսված են անվտանգության գոտիներ կամ անվտանգության գոտիներ և «ISOFIX» մանկական պահող համակարգ, պետք է իրականացվի երեխայի քաշին և հասակին համապատասխանող մանկական պահող համակարգերի (սարքերի) օգտագործման միջոցով:»,

ժդ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 159.1-ին, 159.2-րդ և 159.3-րդ կետերով.

«159.1. 7-ից մինչև 12 տարեկան երեխաների փոխադրումը թեթև մարդատար ավտոմոբիլում և բեռնատար ավտոմոբիլի խցիկում, որոնց կառուցվածքով նախատեսված են անվտանգության գոտիներ կամ անվտանգության գոտիներ և «ISOFIX» մանկական պահող համակարգ, պետք է իրականացվի երեխայի քաշին և հասակին համապատասխանող մանկական պահող համակարգերի (սարքերի) օգտագործման միջոցով կամ անվտանգության ամրագոտիների օգտագործման միջոցով, իսկ թեթև մարդատար ավտոմոբիլի

առջևի նստատեղում՝ միայն երեխայի քաշին և հասակին համապատասխանող մանկական պահող համակարգերի (սարքերի) օգտագործման միջոցով:

159.2. Թեթև մարդատար ավտոմոբիլում և բեռնատար ավտոմոբիլի խցիկում մանկական պահող համակարգերի (սարքերի) տեղադրումն ու դրանցում երեխաներին տեղավորումը պետք է իրականացվեն նշված համակարգերի (սարքերի) շահագործման հրահանգներին (կանոններին) համապատասխան:

159.3. Արգելվում է մինչև 12 տարեկան երեխաներին փոխադրել մոտոցիկլի հետևի նստատեղին, ինչպես նաև բեռնատար ավտոմոբիլի թափքում (բացառությամբ ֆուրգոն թափքով ավտոմոբիլի):»,

ժե. լրացնել հետևյալ բովանդակությամբ 167.1-ին կետով.

«167.1. Շարժական կանգնակների վրա տեղադրված 1.8՝ «Լուսացուցային կարգավորում», 1.15՝ «Սայթաքուն ճանապարհ», 1.16՝ «Անհարթ ճանապարհ», 1.18՝ «Խճի արտանետում», 1.19՝ «Վտանգավոր կողնակ», 1.20.1-1.20.3՝ «Ճանապարհի նեղացում», 1.21՝ «Երկկողմ երթևեկություն», 1.33՝ «Այլ վտանգներ», 2.6՝ «Հանդիպակաց երթևեկության առավելություն», 3.11՝ «Ձանգվածի սահմանափակում», 3.12՝ «Սոնու վրա բեռնվածության սահմանափակում», 3.13՝ «Բարձրության սահմանափակում», 3.14՝ «Լայնության սահմանափակում», 3.15՝ «Երկարության սահմանափակում», 3.16՝ «Նվազագույն միջտարածության սահմանափակում», 3.18.1՝ «Աջ շրջադարձն արգելվում է», 3.18.2՝ «Ձախ շրջադարձն արգելվում է», 3.19՝ «Հետադարձն արգելվում է», 3.20՝ «Վազանցն արգելվում է», 3.21՝ «Վազանցի արգելման գոտու վերջ», 3.22՝ «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցն արգելվում է», 3.23՝ «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցի արգելման գոտու վերջ», 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում», 3.25՝ «Առավելագույն արագության սահմանափակման գոտու վերջ» ժամանակավոր նշանների սպիտակ հիմնագույնը կարող է լինել դեղին:»,

ժզ. 170-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը «1.14.2-րդ» բառից հետո լրացնել «, 1.26-րդ» բառերով,

ժէ. N 1 ձևի 1-ին գլուխը 36-րդ պարբերությունից («1.34.3» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«1.35. «Խաչմերուկի տարածք». Նշանակում է մոտեցում խաչմերուկին, որի հատվածը նշված է 1.26 գծանշմամբ, և որտեղ արգելվում է մուտք գործել, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն Կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի:»,

ժը. N 1 ձևի 1-ին գլխում 43-րդ պարբերությունը («1.35 նշանը կիրառվում է որպես ժամանակավոր:» պարբերությունը) շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.35 նշանը տեղադրվում է խաչմերուկի սահմանին: Եթե բարդ խաչմերուկներում հնարավոր չէ ճանապարհային նշանը տեղադրել խաչմերուկի սահմանին, ապա այն տեղադրում են խաչմերուկի սահմանից ոչ ավել, քան 30 մ հեռավորության վրա:»,

ժթ. N 1 ձևի 4-րդ գլխի 9-րդ պարբերությունում («4.4» թվով սկսվող պարբերությունը) «4.4» թիվը փոխարինել «4.4.1» թվով,

ի. N 1 ձևի 4-րդ գլուխը 9-րդ պարբերությունից («4.4» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«4.4.2. «Հեծանվային արահետի վերջ»,

իա. N 1 ձևի 4-րդ գլխի 10-րդ պարբերությունում («4.5» թվով սկսվող պարբերությունը) «4.5» թիվը փոխարինել «4.5.1» թվով.

իբ. N 1 ձևի 4-րդ գլուխը 10-րդ պարբերությունից («4.5» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«4.5.2. «Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)».

4.5.3. «Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)».

4.5.4, 4.5.5. «Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)». Կառուցվածքորեն և (կամ) 1.2 , 1.23.2 և 1.23.3 հորիզոնական գծանշումներով կամ այլ եղանակով առանձնացման միջոցով արահետի՝ հեծանվային և հետիոտնային կողմերի բաժանված հեծանվահետիոտնային արահետ.

4.5.6, 4.5.7. «Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)».»,

իգ. N 1 ձևի 5-րդ գլխի 12-րդ պարբերությունում («5.11» թվով սկսվող պարբերությունը) «5.11» թիվը փոխարինել «5.11.1» թվով,

իդ. N 1 ձևի 5-րդ գլուխը 12-րդ պարբերությունից («5.11» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«5.11.2. «Հեծանվորդների համար գոտիով ճանապարհ». Ճանապարհ, որով հեծանվորդների և մոպեդների վարորդների երթևեկությունն իրականացվում է հատուկ առանձնացված գոտիով՝ տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքին հանդիպակաց:»,

իե) N 1 ձևի 5-րդ գլխի 13-րդ պարբերությունում («5.12» թվով սկսվող պարբերությունը) «5.12» թիվը փոխարինել «5.12.1» թվով,

իզ. N 1 ձևի 5-րդ գլուխը 13-րդ պարբերությունից («5.12» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«5.12.2. «Հեծանվորդների համար գոտիով ճանապարհի վերջ».»,

իէ. N 1 ձևի 5-րդ գլուխը 14-րդ պարբերությունից («5.13.1, 5.13.2» թվերով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«5.13.3-5.13.4. «Ելք դեպի հեծանվորդների համար գոտիով ճանապարհ».»,

իը. N 1 ձևի 5-րդ գլուխը 15-րդ պարբերությունից («5.14» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«5.14.1. «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտու վերջ».

5.14.2. «Հեծանվորդների համար գոտի».

5.14.3. «Հեծանվորդների համար գոտու վերջ».»,

իթ. N 1 ձևի 5-րդ գլուխը 24-րդ պարբերությունից («5.15.8» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«5.15.1-5.15.7 նշանների վրա պատկերված երթևեկության ուղղությունը ցույց տվող սլաքները կարող են ունենալ նաև այլ կոնֆիգուրացիաներ (ձևեր),

լ. N 1 ձևի 7-րդ գլուխը 21-րդ պարբերությունից («7.20» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«7.21. «Ավտոլցավորման կայան՝ էլեկտրամոբիլների լիցքավորման հնարավորությամբ».»,

լա. N 1 ձևի 8-րդ գլուխը 13-րդ պարբերությունից («1) 8.4.1» թվերով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«1.1) 8.4.2՝ կցորդով կամ կիսակցորդով յուրաքանչյուր տեսակի բեռնատար ավտոմոբիլների կամ տրակտորների, ինչպես նաև մեխանիկական տրանսպորտային միջոցները քարշակող տրանսպորտային միջոցների վրա,»,

լբ. N 1 ձևի 8-րդ գլուխը 14-րդ պարբերությունից («2) 8.4.3» թվերով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«2.1) 8.4.3.1՝ արտաքին սնուցման աղբյուրից լիցքավորվելու հնարավորություն ունեցող էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների վրա,»,

լգ. N 1 ձևի 8-րդ գլուխը 15-րդ պարբերությունից («3) 8.4.8» թվերով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«8.4.9-8.4.15. «Բացի տրանսպորտային միջոցի տեսակից». Ցույց են տալիս այն տրանսպորտային միջոցի տեսակը, որի վրա չի տարածվում նշանի ազդեցությունը.

8.4.14 ցուցանակը ցույց է տալիս, որ նշանի ազդեցությունը չի տարածում որպես թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլ օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա.»,

լդ. N 1 ձևի 8-րդ գլուխը 37-րդ պարբերությունից («8.22.1 - 8.22.3» թվերով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«8.23. «Աշխատում է տարհանիչը». Ցույց է տալիս, որ 3.27-3.30 նշանների ազդման գոտում իրականացվում է տրանսպորտային միջոցների տարհանում.

8.24. «Ծառայողական ավտոմոբիլների համար կայանատեղ»: Ցուցանակի վրա կարող է նշվել կայանատեղն օգտագործող կազմակերպության անվանումը.

8.25. «Բացի ծառայողական ավտոմոբիլներից»: Ցուցանակի վրա կարող է նշվել կազմակերպության անվանումը:»,

լե. N 2 ձևի 1-ին գլուխը 32-րդ պարբերությունից («1.24.1-1.24.3» թվերով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«1.24.4՝ կրկնօրինակում է 8.4.3.1 ցուցանակը. կիրառվում է ինքնուրույն կամ 8.4.3.1 ցուցանակի հետ.»,

լզ. N 2 ձևի 1-ին գլուխը 33-րդ պարբերությունից («1.25» թվով սկսվող պարբերությունից) հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«1.26 (գույնը՝ դեղին)՝ նշում է խաչմերուկի հատվածը, որտեղ արգելվում է մուտք գործել, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին

կիարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն Կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի: Կիրառվում է ինքնուրույն կամ 1.35՝ «Խաչմերուկի տարածք» նշանի հետ:»,

լէ. N 1 ձևի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ նկարները, N 2 ձևի 10-րդ և 11-րդ նկարները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) N 2 հավելվածի՝

ա. 6-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությունում «թաղանթապատում ունեցող» բառերից հետո լրացնել «հետևի դիտապակու կամ հետևի կողային ապակի-ների» բառերը,

բ. 6-րդ կետի 18-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18) հաշվառման համարանիշերը կամ դրանց տեղակայման (ամրացման) ձևը չեն համապատասխանում օրենսդրության կամ ստանդարտների պահանջներին.»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի «Ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման ու տեղակայման կանոնները հաստատելու մասին» N 1699-Ն որոշման՝

1) N 1 հավելվածի 33-րդ կետի 3-րդ պարբերությունից և N 3 հավելվածի 13-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր» բառերը.

2) N 3 հավելվածում՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 27.1-ին կետով.

«27.1. Շարժական կանգնակների վրա տեղադրված 1.8՝ «Լուսացուցային կարգա-վորում», 1.15՝ «Սայթաքուն ճանապարհ», 1.16՝ «Անհարթ ճանապարհ», 1.18՝ «Խճի արտա-նետում», 1.19՝ «Վտանգավոր կողնակ», 1.20.1-1.20.3՝ «Ճանապարհի նեղացում», 1.21՝ «Երկկողմ

երթևեկություն», 1.33՝ «Այլ վտանգներ», 2.6՝ «Հանդիպակաց երթևեկության առավելություն», 3.11՝ «Ձանգվածի սահմանափակում», 3.12՝ «Սոնու վրա բեռնվածության սահմանափակում», 3.13՝ «Բարձրության սահմանափակում», 3.14՝ «Լայնության սահմանափակում», 3.15՝ «Երկարության սահմանափակում», 3.16՝ «Նվազագույն միջտարածության սահմանափակում», 3.18.1՝ «Աջ շրջադարձն արգելվում է», 3.18.2՝ «Ձախ շրջադարձն արգելվում է», 3.19՝ «Հետադարձն արգելվում է», 3.20՝ «Վազանցն արգելվում է», 3.21՝ «Վազանցի արգելման գոտու վերջ», 3.22՝ «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցն արգելվում է», 3.23՝ «Բեռնատար ավտոմոբիլներով վազանցի արգելման գոտու վերջ», 3.24՝ «Առավելագույն արագության սահմանափակում», 3.25՝ «Առավելագույն արագության սահմանափակման գոտու վերջ» ժամանակավոր նշանների սպիտակ հիմնագույնը կարող է լինել դեղին:»,

բ. 48.25-րդ և 50.8-րդ կետերում «4.5» թվերը փոխարինել «4.5.1» թվերով,

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 48.38-րդ կետով.

«48.38. 1.35 «Խաչմերուկի տարածք» նշանը տեղակայվում է այն խաչմերուկի սահմանին, որի հատվածը նշված է 1.26 գծանշմամբ և որտեղ արգելվում է մուտք գործել, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար, բացառությամբ սույն Կանոններով սահմանված՝ աջ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքերի: Եթե բարդ խաչմերուկներում հնարավոր չէ ճանապարհային նշանը տեղադրել խաչմերուկի սահմանին, ապա այն տեղադրում են խաչմերուկի սահմանից ոչ ավել, քան 30 մ հեռավորության վրա:»,

դ. 50.1-ին կետի «բ» ենթակետում «5.11» թիվը փոխարինել «5.11.1» թվով,

ե. 51.6-րդ կետում «4.4» թիվը փոխարինել «4.4.1» թվով,

զ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 51.6.1-ին կետով.

«51.6.1. 4.4.2 «Հեծանվային արահետի վերջ» նշանը կիրառվում է 4.4.1 նշանով նշված արահետի վերջը նշելու համար և տեղակայվում է արահետի վերջում:»,

է. 51.7-րդ կետում «4.5» թիվը փոխարինել «4.5.1» թվով,

ը. լրացնել հետևյալ բովանդակությամբ 51.7.1-51.7.4-րդ կետերով.

«51.7.1. 4.5.2 «Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)» նշանը կիրառվում է հետիոտների, հեծանիվների և մոպեդների համատեղ տեղաշարժը թույլատրող արահետը նշելու համար:

Հիմնական նշանը տեղակայվում է հեծանվահետիոտնային արահետի սկզբում՝ աջ կողմում, կրկնվող նշանը՝ ճանապարհի հետ յուրաքանչյուր փոխհատումից հետո:

51.7.2. 4.5.3 «Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)» նշանը կիրառվում է 4.5.2 նշանով նշված արահետի վերջը նշելու համար և տեղակայվում է արահետի վերջում:

51.7.3. 4.5.4, 4.5.5. «Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)» նշանը կիրառվում է կառուցվածքորեն և (կամ) 1.2 , 1.23.2 և 1.23.3 հորիզոնական գծանշումներով կամ այլ եղանակով առանձնացման միջոցով արահետի՝ հեծանվային և հետիոտնային կողմերի բաժանված հետիոտների, հեծանիվների և մոպեդների տարանջատված տեղաշարժը թույլատրող արահետը նշելու համար:

Հիմնական նշանը տեղակայվում է հեծանվահետիոտնային արահետի սկզբում՝ աջ կողմում, կրկնվող նշանը՝ ճանապարհի հետ յուրաքանչյուր փոխհատումից հետո:

51.7.4. 4.5.6, 4.5.7. «Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)»

նշանը կիրառվում է 4.5.4 և 4.5.5 նշաններով նշված արահետի վերջը նշելու համար և տեղակայվում է արահետի վերջում:»,

թ. 52.11-րդ կետում «5.11» թվերը փոխարինել «5.11.1» թվերով,

ժ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.11.1-ին կետով.

«52.11.1. 5.11.2 «Հեծանվորդների համար գոտիով ճանապարհ» նշանը կիրառվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքին հակառակ ուղղությամբ իրականացվող սահմանված երթուղով երթևեկող հեծանվորդների և մոպեդների վարորդների երթևեկության համար հատուկ առանձնացված գոտիով ճանապարհը նշելու համար:

Նշանը տեղակայվում է ճանապարհի տեղամասի սկզբում՝ երթևեկելի մասի վրա կամ ճանապարհի երկու կողմերում:

Կրկնվող 5.11.2 նշանը տեղակայվում է բարդ հատակագծմամբ խաչմերուկից հետո:»,

ժա. 52.12-րդ կետում «5.12» թիվը փոխարինել «5.12.1» թվով, իսկ «5.11» թիվը՝ «5.11.1» թվով,

ժբ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.12.1-ին կետով.

«52.12.1. 5.12.2 «Հեծանվորդների համար գոտիով ճանապարհի վերջ» նշանը տեղակայվում է 5.11.2 նշանով նշված ճանապարհի վերջում:»,

ժգ. 52.13-րդ կետում «5.11» թվերը փոխարինել «5.11.1» թվերով,

ժդ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.13.1-ին կետով.

«52.13.1. 5.13.3, 5.13.4 «Ելք դեպի հեծանվորդների համար գոտիով ճանապարհ» նշանները կիրառվում են դեպի 5.11.2 նշանով նշված ճանապարհ դուրս գալու ելքերը նշելու համար և տեղակայվում են բոլոր կողային ելքերից առաջ:

Եթե դեպի ճանապարհ դուրս եկող մուտքի վրա մեկ հենարանին տեղակայված են մի քանի նշաններ, ապա 5.13.3, 5.13.4 նշանները տեղադրվում են մյուս նշանների վրա:

Ճանապարհին հարող տարածքներից մուտքերի վրա նշանը կարելի է չտեղակայել, եթե դեպի այդ տարածքներ մտնելը հնարավոր է 5.11.2 նշանով նշված ճանապարհի տեղամասից:»,

ժե. լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.14.1-52.14.3-րդ կետերով.

«52.14.1. 5.14.1 «Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտու վերջ» նշանը տեղակայվում է 5.14 նշանով նշված գոտու վերջում:

52.14.2. 5.14.2 «Հեծանվորդների համար գոտի» նշանը կիրառվում է տրանսպորտային միջոցների ընդհանուր հոսքին համընթաց ուղղությամբ երթևեկող հեծանվորդների և մոպեդների վարորդների երթևեկության համար գոտին նշելու համար:

Նշանը տեղակայվում է գոտու սկզբում՝ դրա վրա, իսկ եթե այն աջ եզրայինն է, ապա նշանը թույլատրվում է տեղակայել գոտու աջ կողմում:

Նշանը ճանապարհի ամբողջ տեղամասի երկարությամբ յուրաքանչյուր խաչմերուկից հետո կրկնվում է, եթե հեծանվորդների և մոպեդների վարորդների երթևեկությունը կազմակերպված է 5.14.2 նշանով նշված գոտիով:

52.14.3. 5.14.3. «Հեծանվորդների համար գոտու վերջ» նշանը տեղակայվում է 5.14.2 նշանով նշված գոտու վերջում:»,

ժզ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.20.1-ին կետով.

«52.20.1. 5.15.1-5.15.7 նշանների վրա պատկերված երթևեկության ուղղությունը ցույց տվող սլաքները կարող են ունենալ նաև այլ կոնֆիգուրացիաներ (ձևեր):»,

ժէ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 54.6-րդ կետով.

«54.6. 7.21 «Ավտոլցավորման կայան՝ էլեկտրամոբիլների լիցքավորման հնարավորությամբ» նշանները կիրառվում են էլեկտրամոբիլների լիցքավորման հնարավորությամբ ավտոլցավորման կայանի տեղը նշելու համար: Անհրաժեշտության դեպքում

նշանները բնակավայրերից դուրս նախօրոք կարող են տեղակայվել 400-800 մ հեռավորության վրա:»,

ժը. 55.7-րդ կետի երկրորդ պարբերությունը «գ» ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ1»-ին ենթակետով.

«գ1) 8.4.3.1՝ արտաքին սնուցման աղբյուրից լիցքավորվելու հնարավորություն ունեցող էլեկտրամոբիլների և հիբրիդային ավտոմոբիլների վրա.»,

ժթ) լրացնել հետևյալ բովանդակությամբ 55.7.1-ին կետով.

«55.7.1. 8.4.9-8.4.15 «Բացի տրանսպորտային միջոցի տեսակից» ցուցանակները կիրառվում են այն տրանսպորտային միջոցները նշելու համար, որոնց վրա չի տարածվում նշանի ազդեցությունը: 8.4.14 ցուցանակը ցույց է տալիս, որ նշանի ազդեցությունը չի տարածում որպես թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլ օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա:»,

ի. լրացնել հետևյալ բովանդակությամբ 55.26-55.28-րդ կետերով.

«55.26. 8.23 «Աշխատում է տարհանիչը» ցուցանակը կիրառվում է 3.27-3.30 նշանների հետ և ցույց է տալիս, որ 3.27-3.30 նշանների ազդման գոտում իրականացվում է տրանսպորտային միջոցների տարհանում:

55.27. 8.24 «Ծառայողական ավտոմոբիլների համար կայանատեղ» ցուցանակը կիրառվում է 6.4 նշանի հետ և ցույց է տալիս, որ 6.4 նշանի ազդման գոտում թույլատրվում է կայանել միայն տվյալ կազմակերպության տրանսպորտային միջոցները: Կազմակերպության անվանումը կարող է նշվել ինչպես նույն, այնպես էլ առանձին ցուցանակի վրա:

55.28. 8.25 «Բացի ծառայողական ավտոմոբիլներից» ցուցանակը կիրառվում է 3.27-3.30 նշանների հետ և ցույց է տալիս, որ 3.27-3.30 նշանների ազդեցությունը չի

տարածվում տվյալ կազմակերպության տրանսպորտային միջոցների վրա: Կազմակերպության անվանումը կարող է նշվել ինչպես նույն, այնպես էլ առանձին ցուցանակի վրա:»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի «Ճանապարհային գծանշմանը ներկայացվող պահանջները, դրա կիրառման կանոնները, ճանապարհային ցանկապատներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները, ուղղորդ սարքվածքներին ներկայացվող պահանջները, դրանց կիրառման և տեղակայման կանոնները և արհեստական անհարթություններին ներկայացվող պահանջները և դրանց կիրառման կանոնները հաստատելու մասին» N 113-Ն որոշման՝

1) N 1 հավելվածը՝

ա. լրացնել հետևյալ բովանդակությամբ 83.1-ին կետով.

«83.1. 1.24.4 գծանշումը կիրառվում է 8.4.3.1 նշանը կրկնելու համար: Կիրառվում է ինքնուրույն կամ 8.4.3.1 նշանի հետ:»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 85.1-ին կետով.

«85.1. 1.26 (գույնը՝ դեղին) գծանշումը կիրառվում է նշելու համար խաչմերուկի հատվածը, որտեղ արգելվում է մուտք գործել, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար: Կիրառվում է ինքնուրույն կամ 1.35՝ «Խաչմերուկի տարածք» ճանապարհային նշանի հետ: 1.26 գծանշումը կատարվում է խաչմերուկի տարածքում:»,

2) N 2 հավելվածի՝

ա. «1. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԳԾԱՆՇՈՒՄ» բաժինը «1.24.3» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «1.24.4» կետով.

«	1.24.4.		Կրկնում է 8.4.3.1 ճանապարհային նշանը:	»,

բ. «1. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԳԾԱՆՇՈՒՄ» բաժինը «1.25» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «1.26» կետով.

«	1.26.		Նշում է խաչմերուկի հատվածը, որտեղ արգելվում է մուտք գործել, եթե առջևում՝ երթևեկության ուղղությամբ առաջացել է խցանում, որը վարորդին կհարկադրի կանգ առնել՝ խոչընդոտ ստեղծելով հատող ճանապարհով լայնական ուղղությամբ տրանսպորտային միջոցների երթևեկության համար:	»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. ապրիլի 25
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
ապրիլի 11-ի N 439 - Ն որոշման

«Նկար 2

1. ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՆՇԱՆՆԵՐ

1.1	1.2	1.3.1	1.3.2	1.4.1	1.4.2	1.4.3	1.4.4	1.4.5	1.4.6
Երկաթուղային գծանց՝ ուղեփակոցով	Երկաթուղային գծանց՝ առանց ուղեփակոցի	Միագիծ երկաթուղի	Բազմագիծ երկաթուղի	Մոտեցում երկաթուղային գծանցին					

1.5	1.6	1.7	1.8	1.9	1.10
Հատում տրամվայի գծի հետ	Հավասարազոր ճանապարհների հատում	Հատում շրջանաձև երթևեկության հետ	Լուսացուցային կարգավորում	Բացվող կամուրջ	Ելք դեպի առափ

1.11.1	1.11.2	1.12.1	1.12.2	1.13	1.14
Վտանգավոր շրջադարձ		Վտանգավոր շրջադարձեր		Կտրուկ վայրէջք	Կտրուկ վերելք

1.15	1.16	1.17	1.18	1.19
Սայթաքուն ճանապարհ	Անհարթ ճանապարհ	Արհեստական անհարթություն	Խճի արտանետում	Վտանգավոր կողնակ

1.20.1	1.20.2	1.20.3	1.21	1.22	1.23
Ճանապարհի նեղացում			Երկկողմ երթևեկություն	Հետիոտնային անցում	Երեխաներ

1.24	1.25	1.26	1.27	1.28	1.29
Հատում հեծանվային արահետի հետ	Ճանապարհային աշխատանքներ	Անասունների քշում	Վայրի կենդանիներ	Քարերի անկում	Կողային քամի

				
1.30	1.31	1.32	1.33	1.35
Ցածրաթռիչք ինքնաթիռներ	Թունել	Խցանում	Այլ վտանգներ	Խաչմերուկի տարածք

1.34.1	1.34.2	1.34.3

Նշանների չափերը և սպիտակ գծերի հաստությունները հավասար չեն
Շրջադարձի ուղղություն

Նկար 5

4. ԹԵԼԱԴՐՈՂ ՆՇԱՆՆԵՐ

4.1.1	4.1.2	4.1.3	4.1.4	4.1.5	4.1.6
Երթևեկությունն ուղիղ	Երթևեկությունը դեպի աջ	Երթևեկությունը դեպի ձախ	Երթևեկությունն ուղիղ կամ դեպի աջ	Երթևեկությունն ուղիղ կամ դեպի ձախ	Երթևեկությունը դեպի աջ կամ դեպի ձախ
4.2.1	4.2.2	4.2.3	4.3	4.4.1	4.4.2
Արգելքի շրջանցումն աջից	Արգելքի շրջանցումը ձախից	Արգելքի շրջանցումն աջից կամ ձախից	Շրջանաձև երթևեկություն	Հեծանվային արահետ	Հեծանվային արահետի վերջ

4.5.1	4.5.2	4.5.3	4.5.4	4.5.5
Հետիոտնային արահետ	Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)	Համատեղ երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (համատեղ երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)	Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետ)	

4.5.6	4.5.7	4.6	4.7
Տարանջատված երթևեկությամբ հետիոտնային և հեծանվային արահետի վերջ (տարանջատված երթևեկությամբ հեծանվահետիոտնային արահետի վերջ)		Նվազագույն արագության սահմանափակում	Նվազագույն արագության սահմանափակման գոտու վերջ

4.8.1	4.8.2	4.8.3
Վտանգավոր բեռներով տրանսպորտային միջոցների երթևեկության ուղղություն		

Նկար 6

5. ՀԱՏՈՒԿ ԹԵԼԱԴՐԱՆՔԻ ՆՇԱՆՆԵՐ

5.1	5.2	5.3	5.4	5.5	5.6
Ավտոմայրուղի	Ավտոմայրուղու վերջ	Ճանապարհ ավտոմոբիլների համար	Ավտոմոբիլների համար ճանապարհի վերջ	Միակողմ երթևեկությամբ ճանապարհ	Միակողմ երթևեկությամբ ճանապարհի վերջ

5.7.1	5.7.2	5.8	5.9	5.10
Ելք դեպի միակողմ երթևեկությամբ ճանապարհ		Դարձափոխային երթևեկություն	Դարձափոխային երթևեկության վերջ	Ելք դեպի դարձափոխային երթևեկությամբ ճանապարհ

5.11.1	5.11.2	5.12.1	5.12.2	5.13.1	5.13.2
Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ	Հեծանվորդների համար գոտիով ճանապարհ	Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհի վերջ	Հեծանվորդների համար գոտիով ճանապարհի վերջ	Ելք դեպի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտիով ճանապարհ	

5.13.3	5.13.4	5.14	5.14.1	5.14.2	5.14.3
Ելք դեպի հեծանվորդների համար գոտիով ճանապարհ		Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտի	Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների համար գոտու վերջ	Հեծանվորդների համար գոտի	Հեծանվորդների համար գոտու վերջ

5.15.1	5.15.2						
Երթևեկության ուղղությունները գոտիներով	Երթևեկության ուղղությունները գոտիով						

5.15.3			5.15.4		5.15.5	5.15.6
Գոտու սկիզբ			Գոտու սկիզբ		Գոտու վերջ	Գոտու վերջ

5.15.7			5.15.8
Երթևեկության ուղղությունը գոտիներով			Գոտիների քանակը

5.16	5.17	5.18	5.19.1	5.19.2	5.20	5.21	5.22
Ավտոբուսի և (կամ) տրոլեյբուսի կանգառի տեղ	Տրամվայի կանգառի տեղ	Թեթև մարդատար տաքսիների կայանման տեղ	Հետիոտնային անցում		Արհեստական անհարթություն	Բնակելի գոտի	Բնակելի գոտու վերջ

5.23.1	5.23.2	5.24.1	5.24.2	5.25	5.26
Բնակավայրի սկիզբ		Բնակավայրի վերջ		Բնակավայրի սկիզբ	Բնակավայրի վերջ

5.27	5.28	5.29	5.30	5.31	5.32	5.33	5.34
Կայանման սահմանափակումով գոտի	Կայանման սահմանափակումով գոտու վերջ	Կարգավորվող կայանման գոտի	Կարգավորվող կայանման գոտու վերջ	Առավելագույն արագության սահմանափա-կումով գոտի	Առավելագույն արագության սահմանափա-կումով գոտու վերջ	Հետիոտնային գոտի	Հետիոտնային գոտու վերջ

Նկար 8

7. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ

7.1	7.2	7.3	7.4	7.5
Առաջին բժշկական օգնության կետ	Հիվանդանոց	Ավտոլցավորման կայան	Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկում	Ավտոմոբիլների լվացում
7.6	7.7	7.8	7.9	7.10
Հեռախոս	Սննդի կետ	Խմելու ջուր	Հյուրանոց կամ մոթել	Հանգրվան
7.11	7.12	7.13	7.14	7.15
Հանգստի վայր	Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության պահակետ	Ոստիկանություն	Միջազգային ավտոմոբիլային փոխադրումների հսկման կետ	Ճանապարհային երթևեկության մասին տեղեկություն հաղորդող ռադիոկայանի գործողության գոտի

7.16	7.17	7.18	7.19	7.20	7.21
Վթարային ծառայությունների հետ ռադիոկապի գոտի	Լողավազան կամ լողափ	Ջուգարան	Արտակարգ կապի հեռախոս	Կրակմարիչ	Ավտոլցավորման կայան՝ էլեկտրամոբիլների լիցքավորման հնարավորությամբ

Նկար 9

8. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ (ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐ)

			
8.1.1	8.1.2	8.1.3	8.1.4
Հեռավորություն մինչև օբյեկտ	Հեռավորություն մինչև օբյեկտ	Հեռավորություն մինչև օբյեկտ	

					
8.2.1	8.2.2	8.2.3	8.2.4	8.2.5	8.2.6
Ազդման գոտի	Ազդման գոտի				

8.3.1	8.3.2	8.3.3
Ազդման ուղղություններ		

8.4.1	8.4.2	8.4.3	8.4.3.1	8.4.4

8.4.5	8.4.6	8.4.7	8.4.8
Տրանսպորտային միջոցի տեսակ			

8.4.9	8.4.10	8.4.11	8.4.12	8.4.13	8.4.14	8.4.15
Բացի տրանսպորտային միջոցի տեսակից						

						
8.5.1	8.5.2	8.5.3	8.5.4	8.5.5	8.5.6	8.5.7
Շաբաթ, կիրակի և տոն օրեր	Աշխատանքային օրեր	Շաբաթվա օրեր	Գործողության ժամանակ			

8.6.1	8.6.2	8.6.3	8.6.4	8.6.5

8.6.6	8.6.7	8.6.8	8.6.9
Տրանսպորտային միջոցի կանգնեցման ձևը կայանման տեղերում			

8.7	8.8	8.9	8.10	8.11	8.12
Կայանում չգործարկված շարժիչով	Վճարովի ծառայություններ	Կայանման տևողության սահմանափակում	Ավտոմոբիլների զննման տեղ	Թույլատրելի առավելագույն զանգվածի սահմանափակում	Վտանգավոր կողնակ

					
8.13	8.14	8.15	8.16	8.17	8.18
Գլխավոր ճանապարհի	Երթևեկության գոտի	Կույր հետիոտներ	Խոնավ ծածկույթ	Հաշմանդամներ	Բացի հաշմանդամներից

ուղղություն					
8.19	8.20.1	8.20.2	8.21.1	8.21.2	8.21.3
Վտանգավոր բեռի դասը	Տրանսպորտային միջոցի սայլակի տեսակը		Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի տեսակը		

					
8.22.1	8.22.2	8.22.3	8.23	8.24	8.25
Խոչընդոտ			Աշխատում է տարհանիչը	Ծառայողական ավտոմոբիլների համար կայանատեղ	Բացի ծառայողական ավտոմոբիլներից

Նկար 10

1. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԳԾԱՆՇՈՒՄ

1.1	1.2	1.3	1.4	1.5
1.6	1.7	1.8	1.9	1.10
1.11	1.12	1.13	1.14.1	1.14.2
				
1.15	1.16.1	1.16.2	1.16.3	1.17
				
1.18	1.19	1.20	1.21	
1.22	1.23.1	1.23.2	1.23.3	
1.24.1	1.24.2	1.24.3	1.24.4	
1.25		1.26		

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԳԾԱՆՇՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ









Նկար 11

2. ՈՒՂՂԱՁԻԳ ԳԾԱՆՇՈՒՄ

2.1.1	2.1.2	2.1.3	2.2	2.3
				
2.4	2.5	2.6	2.7	

ՈՒՂՂԱՁԻԳ ԳԾԱՆՇՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ







»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ